Արձանագրություն N 3

«ՓՍՍ-ԳՀԱՊՁԲ-19/5» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան, Բյուզանդի 1/3, 205 սենյակ **«17» «07» 2019թ**
ժ.14:30

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Վ. Մաղաքյանը,
Հանձնաժողովի անդամներ՝ Դ. Մանասյանը, Վ. Խաչատրյանը, Ա. Անանյանը
Հանձնաժողովի քարտուղար՝ Հ. Ղազարյանը

1. Գնանշման հարցման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից որակավորումը հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու մասին

(Վ. Մաղաքյան)

Ընդունել ի գիտություն, որ.

- Առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ **«ԻԱՅՍԻՏԵԼԵԿՈՄ» ՍՊԸ-ին**, 12.07.2019թ. ծանուցվել է երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերը:
- 12.07.2019թ. ՀՀ ԿԱ ՊԵԿ հարցում է ներկայացվել՝ **«ԻԱՅՍԻՏԵԼԵԿՈՄ» ՍՊԸ-ի** ՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ՝ ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը, ընդ որում ՝ եթե ՀՀ ԿԱ ՊԵԿ հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով պատվիրատուին չի տրամադրում հարցման մասին եզրակացություն, ապա մասնակցի ներկայացրած հայտարարությունը համարվում է իրականությանը համապատասխանող:
- ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կողմից հարցման եզրակացությունը ներկայացվել է սահմանված ժամկետներում:
- Հանձնաժողովի քարտուղարի կոմից 11.07.2019թ. առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի պատճենները, գնահատման թերթիկների երկուական օրինակ և Հայաստանի Հանրապետության ԿԱ ՊԵԿ-ից ստացված եզրակացությունը տրամադրվել է հանձնաժողովի անդամներին, որի գնահատման արդյունքները բերված են ստորև.

Մասնակցի հայտի գնահատման չափանիշները գնահատականը			**Մասնակցի հայտի գնահատման արդյունքները**
			Մասնակցի անվանումը
			«ԻԱՅՍԻՏԵԼԵԿՈՄ» ՍՊԸ
1	«Մասնակցության իրավունքը» չափանիշը	Բավարար Անբավարար	Բավարար
2	Առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը	Բավարար Անբավարար	Բավարար
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ		**Բավարար Անբավարար**	**Բավարար**

2. Հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին

(Վ. Մաղաքյան)

Հանձնաժողովը որոշեց.

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1

Ընտրված մասնակից ճանաչել՝

1-20-րդ չափաբաժինների մասով՝ «ԻԱՅՍԻՏԵԼԵԿՈՄ» ՍՊԸ –ին:

Ընտրված մասնակիցը ճանաչվել է բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝

նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ 0:

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 2

- Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ 0:

Հանձնաժողովի		
Նախագահ՝		**Վ. Մաղաքյան**
Անդամներ՝		**Դ. Մանասյան**
		Վ. Խաչատրյան
		Ս. Անանյան
Քարտուղար՝		**Հ.Ղազարյան**